



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 24

ՀԱՅԵՐԱՅԻՆ

9 ՓԵՏՐՈՒՆ 1908

ԱՊՐԱՅՆԱԿԱՐԳ ԲԱՊԿՈՂՋՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԱՅՆԱԿԱՐԳ ԲԱՊԿՈՂՋՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գարու, Օռոգալ-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատը 40 փարա

(Մ. Ա. Ամարյան) شرکت مطبعه — باب عالی جاده سنده نوم ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութիւն Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտքի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
ըր գնուից

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ :
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՈՒՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՄԱՆ ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. այն մեքենան ունենէն կատարելագործուածը,
հասաւորուածը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան լաւաւաւանց հէջ :

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մարշէի գէտ, թիւ 343 եւ 343 կրկին .
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին գէտ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին գէտ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան համամ .
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին գէտ, թիւ 13 .

ՍԱԻԻՏԱՐ

2 արշը Պոյու, թիւ 120 .

Յիսուսեայ երաւեստութիւն

Մասնահիշեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւրքիոյ ուրնը :



ԱՐՏԻԵԼ Ք ՕՐԱ

ԻՅՐԹ՝ ազգային, գրական եւ քաղաքական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլ-
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. դա-
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-
ամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաւր փարա : **ԱՐՏԻԵԼ Ք**
հրա յարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեայ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով :

ԱՐՏԻԵԼ Ք, իր վերախաղմուած խմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԿԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԵՐԵՎԱՆ, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար : Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
բաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բաց ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն :

ԱՐՏԻԵԼ Քի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագրութեան պէտք է ուղղել Տէր և
Տնօրէն Գարեգին Էֆ. Պոյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մանուկիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թիւթին սպարանն ու խմ-
բագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 24

ՇԱՐԱԹ

9 ՓԵՏՐՈՒԱՐ 1908

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

ՅՕԴՈՒԱԾ - ՆԱՄԱԿ

Ազնիւ Խմբագիր,

Գիտնալով թէ Ձեր անձնական նամակին ի պատասխան ղրկած երկտողս՝ ընդհանուրին պիտի հրամցուի խմբագրութեանդ կողմէ, չեմ գիտեր ինչո՞ւ կը նեղուիմ կը սեղմուիմ ու պէտք եղած կարողութենէն զուրկ կը զգամ ինքզինքս ո՛ր եւ է բան գրելու Հանրագիտակիր համար:

Միշտ հետեւած եմ Ձեր հրատարակութիւններուն, մանաւանդ վերջին մէկ երկուամիսներուն մէջ լոյս տեսած թիւերուն պարունակութիւնը աչքիս առջեւ ունենալով՝ դիտած եմ թէ թերթը՝ իր խնամեալ բովանդակութեամբ օր ըստ օրէ կը մօտենայ իր նշանակին, և կարդարացնէ իր կոչումը՝ որ է զուարթութիւն:

Ամէն անգամ որ հրաւէր կընէք ինձ աշխատակցիլ սիրուած Հանրագիտակին, կուզեմ

թոթուել ծանրութեան լրջութիւնը և թեթեւ ոճով մը ներկայանալ Ձեր զուարթասէր ընթերցողաց, այլ ի զո՛ւր... Ի ծնէ զուարթ, և ի բնէ օժտուած ըլլալու է մարդ որպէս զի յաջողութիւնը անխուսափելի ըլլայ: Ամէն մարդ Ալփիար չի ծնիր, ո՛չ Լիլա և ո՛չ ալ Թօլայեան, ասոնցմէ դուրս գրուածները կամ բռնազբօսիկ արտադրութիւններ են և կամ գրական այդ զուարթ ճիւղին վիժածները: Եւ որչափ մեծ յանդգնութիւն պէտք է ունենայ մարդ՝ որպէս զի այդ երեք մասնագէտներուն մօտ ամբողջ գրաւէ և մասնակցի իրենց քրքշալիք ճոխ սեղանին, որչափ:

Ամէն անգամ որ գրութիւն մը ունենամ թերթիդ մէջ, ինձ այնպէս կը թուի և կամ կ'երեւակայեմ ես զիս սեփ սեւ սգաւորի մը տարազով՝ հարսանեկան զուարթ հանդէսի մը գտնուած ըլլալ, ճոխ թուալէթներու այլա-

զան և գունազեղ տարազներուն մէջ՝ ծնողաց սուգը և կամ որդիական կորուստը լացող խղճալի մահկանացուի մը պէս, և ահա ինչո՞ւ շատ անգամ կը խուսափիմ մասնակցիլ ձեր համակ զուարթ Հանդէսին:

Այս օր մեր գրական հրապարակը այնքան ճոխ՝ և այլազան է լուրջ պարբերականներով, որոնց ընթերցումէն յոգնած ընթերցասէրներ իրենց մտքին ու աչքին հանգիստը ձեր մօտ, ձեր թերթին մէջ կը գտնեն: Հանրագիտակ ուսմանն է գրական անծայրածիր ու միապաղաղ անապատին, ուր կը փնտռուի զուգութիւն, զուարթութիւն և հանգիստ:

Գրական այս փնտռումը և օգտակար ճիւղը, որ Պարոնեանէն սերած է մեր մէջ, ցաւալի է ըսել թէ՝ դեռ պէտք եղածին պէս ճանչցուած չէ մեր մէջ, նա մանաւանդ նոր սերունդէն, որուն իտէպն է վերացականութիւնը, թուուցիկը և ենթադրականը: Ան, այսինքն նոր սերունդին համար խօսելով՝ միշտ կը սիրէ ընթերցումը այնպիսի գրուածքներու, որոնցմէ բան չի հասկնար, իմաստ մը չի կրնար հասնել, և լոկ գրականութենէ հասկըցողի և անոր հեծեւողի սին փառքին համար կը հետեւի անոր:

Գրականութեան մէջ չկայ ճիւղ մը՝ բացի երգիչականէն և դաւեղատականէն, որ կարենայ հրահանգել սանտոները, մոլիները, վարակուածները: Վարդ, խրատական, յորդորական, բոլորը տպարդիւն կը մնան և իրենց նպատակին չեն կրնար հասնիլ, և միայն այդ երկու քոյր *branches* ներս են որոնցմով կարելի է ցաղկել, մաքրիլ և զգաստացնել ամէն աշունք՝ որոնք բարոյական վարդապետութիւններու անհրաժեշտ պէտք ունին:

Ծաղրը ու գահգահան է՛ն ազդու միջոցներն և դեղագիրներն են այդ կարգի բարոյական հիւանդներու համար: Ծաղրով ամէն ինչ կը յարդարուի, ամէն մոլութիւն կը վերնայ և ամէն չարիք բարիքի կրնայ փոխուիլ, ահա ինչո՞ւ կուգեմ նախապատուութիւնը տալ այդ ճիւղերուն՝ միւս աւելի բարձրունքով:

Ընտանեկան չըջանականերու մէջ մուտ գրուած և հինէն արմատացած վազիւր ունակութիւնները և մոլութիւնները ոսկեդարու հայերէնով, և կամ Ժոան-Ժոաք Ռուսօներու, Վ. Հիւկօներու և մեծ բարոյախօսներու ու ճովը ու սիւթէմովը չէ կարելի փառնալ, այդ կարգի գրուածքները այն դերը կը կատարեն ենթականերու՝ ինչ որ կընէ աբիօնը ծխամոլներու վրայ, կը դմբեցնեն, կը քնացնեն և ... յորանջել կուտան պարզապէս, բայց

զուարթ պատկերացումը, քրջալիւր նկարագրական մը հիմնովին կրնայ փոխել ընթերցողին բառաբեռը, քանի որ անոր մէջ ծաղրուած կը տեսնայ իր արարքները, իր սխալ ճամբան:

Դուք, Ազնիւ Խմբագիր, ձեր խէտալ հրատարակութիւններով՝ բարոյական բժիշկը եղած էք հանրութեան, ձեր մէն մի գրութիւնը կոչում ունի ընտանիքներ փրկելու, անհասներ մարգելու, ինկածներ վերցնելու և տալու այն էական և իսկական կրթութիւնը՝ որուն պէտք ունի, երկուս երիտասարդութիւնը՝ վարժարանէն դուրս:

Հանրագիտակ՝ ինչպէս կը հաստատուն ընթերցողներ, հասած է այն կէտին՝ ուր պէտք է ծափահարել: Դուք այնքան չէք կրնար տեսնել անոր յաջողութիւնը՝ որպիսի մենք: Այս օր բովանդակ համայնքը գիտցած է գրահասակը զձեզ և ձեր գործը, և ալ աւելի գրական փայլուն ապագայ մը կապատէ ձեզի՝ եթէ չի վհատիք, և եթէ կորովը, ի լաւն ձգտումը և գործին վրայ ձեր ունեցած սէրն ու գուրգուրանքը չի նստազի, չի պակսի:

Յօդուած մը չէ այս՝ զոր կը զրկեմ Ձեզ, Ազնիւ Խմբագիր, այլ բարեկամական մէկը մանի տղերք, որոնցմէ գիտեմ թէ չէք շահար, և եթէ հրատարակութեան իսկ տալու չափ յարմար դատէք, մի կարծէք թէ ընթերցողներ տարբեր պիտի մեկնեն, քանի որ դուք ձեր յարատեւ գործունէութեամբ և արժանի համբաւովը, այս կարգի ուշադրանքով պէտքը գլած անցած էք այլեւս:

Իբրեւ անկեղծ բարեկամուհի մը Ձեզ և ձեր սիրելի թերթին, ես ալ իմ սգաւորի տըխուր և մեղամաղձոտ տարազս ձգելով՝ պիտի աշխատիմ յառաջիկային ձեր գրական սեռը մշակել, զի համոզուած եմ թէ՝ օր մը այդ ճիւղը միահեծանը պիտի ըլլայ գրական աշխարհին մէջ:

Ընդունեցէք եւ աշխատեմ:

2020 (*)

Առանց մեր կողմէն երկող մը աւելցնելու չպիտի ուզէինք հրատարակել այս խիստ գովասանական նամակը, զոր զրկելու պատիւը բրած է մեզ՝ մեր յարգելի աշխատակցուհին Զաւա: Յայտնելով հանդերձ մեր անկեղծ շնորհակալքը՝ եր այնքան ջերմ տողերուն, պատրաստ կզգանք մենք զձեզ կարելին ընել, արդարացնելու համար մեր անարժան կարողութեան վրայ գրուած յոյսերը: Ուրախ ենք լսելով յովհեւ ուրեք թէ՝ Հանրագիտակ փնտռուած թերթը եղած է է՛ն Հայ-Լայփ սալօնէն՝ մինչ օրս արտադրելու այս նշանակելի պարագան զձեզ կը մղէ խոտախաղ կարգ մը նորութիւններ և սիւնաքաղեր, զորս պիտի հրատարակենք հանրութեան յառաջիկային: ՆՄԲ.

ՇՈԳ ՄՈԳ

A l' Alpiâr !!!

Ո՛ւր գտնեմ ես Տեր այսինչին պէս փառա-
նայ մը որ չիժթէ երեցկիներ մէկ տունի մէջ
կը պահէ մինչեւ այսօր :

Երկու երեցկիներէ ա՛րք առաջ պիտի
մեռնի՝ չեմ գիտեր, բայց գիտեմ թէ տեղա-
պան առանց երեցկիների չպիտի մեռնի :

×

Եւրոպացի աղջիկը նախ կը սիրէ եւ ապա
կը կարգուի. Հայ աղջիկը կը պահանջէ որ
նախ կարգուի եւ կը խոստանայ ապա սիրելի :

Ինչ որ է սակայն, ամուսնութիւնը եր-
ջանկութիւն չի նշանակեր ոչ մեր մէջ եւ ոչ
ալ անոնց :

Հակառակ սակայն այս նշանակութեան
կարգուող կարգուողի :

Ոչ ամուսնութեան դէմ դարձան մը պիտի
գտնուի եւ ոչ ալ ... հիւժախիտ :

×

Սկիզբն իմաստութեան Աստուծէ վախճալն
է, իսկ սկիզբն յիմարութեան՝ կնիկներէ չի
վախճալը :

×

Կին մը ճանչնալու համար նախ սիրելու
է, բայց ճանչնալ սկսելուդ պէս կը հասկը-
նաս թէ սիրելու չէիր :

×

Սիրոյ մէջ համբոյրը զգացումներդ բա-
ցատրելու կը ծառայէ, իսկ ամուսնութեան
մէջ ... կնկանդ բերանը գոցելու :

×

Այլամերձ կին մը միմակ փուկ չի կրնար
ըլլալ, ինչպէս որ դերձակդ միմակ քեզի հա-
մար հագուստ չի կրնար ձելել : Երկուքն ալ
կը վախճան որ ձեռքի վարժութիւններն կը
կորսնցնեն :

×

Տ'Արվեռի սօսին գոց ընելէ եւ ինտրայի
Ներաւառի կարգալէ ետք մէկէ մը չես
կրնար պահանջել որ երբայ դարբինի մը փոլ
աւելեւ ըլլայ եւ կամ փրփրիսու ետքանի
մը փոլ թեզկեանհար :

×

Ձոյգ մը կանացի աղւոր ոտներ սաղմո-
սերգութեան մը չափ պերճախօս են, որով
հետեւ տիրոջը աղւոր բաներուն վրայ մտածել
կուտան քեզի :

×

Մեր փառանքներուն հարիւրին ինքնունը
տեղեր կըլլան պարզապէս ընտանիքի մը բեռը
մարդկօրէն չի կրնալ տանելուն համար :

×

Հայ վարժապետին ստեղծումը՝ ամենեւ
sinistre, ամենեւ անհամ կասակն է գոր եր-
բէք Աստուծոյ նշան ըլլալ իր արարածոց ե-
րեսին :

×

Քրիստոս ոչ ձեռնոց կը հագներ եւ ոչ
թօրին-ֆայօշ. Քրիստոս զըվանաչը սիկատայ
չէր ծխէր. Քրիստոս օրաչը շապիկ չէր գոր-
ծածեր. Քրիստոս մեծաքա թաւիկնալով չէր
արբեր ֆրիներ. Քրիստոս հոս հոն պտոյս չէր
ըներ. Քրիստոս ոսկի շորայ չէր կրէր կուրծ-
քին վրայ. Քրիստոս porte-monnaieի պէտք
չէր զգար. Քրիստոս ժամուց չէր մուտար.
Քրիստով օ ի՞նչ օրօններով չէր սրբուեր. Քրի-
ստոս կիներու հետ թացիկիւնիչ չէր ըլլար.
Քրիստոս տունին մէջ սպասուհի չէր պահեր.
Քրիստոս վասնհամբաւ կիներու տունին մէջ
սենեակ չէր վարձեր :

Բայց այսօր, իր աւակերտներէն ոմանք, իր
ուխիտն հետեւողները, այս ամէնը կրնեն, առա-
կելով թէ ներկայ դարս այսպէս կը պահանջէ :

×

Կեանքիս մէջ՝ երկրաւարժէն, հրդեհէն,
ժանտախտէն, ֆօլեռայէն եւ ... կիներու
լեզուէն միայն կը վախճամ :

×

Իզմիրի համար սեխի, չամիչի եւ խոզ-
կաղինի փաղափ կ'ըսեն օտարները, allons
done ! Իզմիր աղւոր կիներու փաղափն է ինծի
համար ինչպէս նաեւ ամէն անոնց համար
ալ որոնք կ'ընչ մը ինչպէս նայելու էին
զաղտնիք գիտեն :

×

Նոյն իսկ երբ շատ հաւատք չունենամ հան-
դերձեալին վրայ եւ շատ ալ չի հաւանամ թէ
ինչ կըսեն ինծի Գաղատացուց երկրորդ քուղ-
քը, Կորնթացուց առաջինը եւ վերջինը սուր-
բերուն, նորէն կը սիրեմ եկեղեցին որովհե-
տեւ եկեղեցին համակ բանաստեղծութիւնն է,
համակ ներդաւանակութիւն :

Թ. ԱԼՓԻԱՐ

ԻՍ ՎԱՐՊԵՏՍ

Ամէն անգամ որ, Ամասեայի խնձորի նըման, թոմպուլիկ կլորիկ մանչ և աղջիկ տղաքներ կը տեսնեմ՝ որոնք խաղալով խընդալով Մանկապարտէզ կը վազեն՝ ինչ մեղքս պահեմ, կատաղութենէս ու նախանձէս կ'երիմ ու կը մրկիմ թէ ինչո՞ւ 40 տարի ուշ ծնած չեմ որպէս զի մանուկներու համար երիցս երանեալ այս անճառելի օրհնութիւնը ես ալ վայելէի: Թէ որ գլխու ցաւ չըլլար, նկարագրեմ ձեզի իմ գացած Մանկապարտէզ՝ զս, որ այն ատեն (պարիթ ըլլայ հէմէն) Ծաղկոց կը գոչէին:

Երեւակայեցէք գետնայարկ, խոնաւ, անլոյս սենեակ մը՝ չորեքտասան մեծափառ ճէմիչներու երկարապատում շարքին ճիշտ առ ճիշտ քովիկը՝ ուր միցեքներու վրայ ծալլապատիկ և կամ ծնկան վրայ նստած Հաւատաքննական տանջանքներ կրելու կը զըրկէին մեզ՝ մեր միամիտ ծնողքը:

Մանկավարժնի՞ս էր (վայ գլխուն մէջը ըլլայ) ութսուննոց մը, միջահասակ, սապատող, նիհար բայց ջղուտ, Պոլիսարացի պիլիքի պէս՝ 20ական թէլ ծնոտին դուրս ցցուած ոսկորներուն և առ առաւելն 15 թէլ մազ ալ՝ թուչին վրայ. խոթողադէմ և հողաթափ հազած, ճէնճոտ շուպառային վրայէն սեւ եազմա մը, իսկ ձեռքը՝ անբաժան կերպով շիմէի օրհնեալ գաւազան մը՝ որով — ի սէր մեր բարեք դաստիարակութեան և մեր ծընողաց մասնաւոր խնդրանք — խուռտուխալ կը հանէր մեր մանկական փափուկ թարմինն ու ոսկորները:

Այս էր ահա մեր վարժապետը՝ զոր դըպրոցին չափահաս աշակերտները սովոր էին կախափա քահանայապետ անուանել:

Բնական է որ, ասանկ ինսան ազմանը մարդու մը քով երթալու դժգամակէինք, և առաւօտները՝ նախ ծնողքս սիֆտահ կ'ընէր ծեծը: Մազալլահ, եթէ վարժապետը աչքերնիս թըջած տեսներ, ա՛ռ քեզի՛ տփոց մըն ալ հոն, և արդէն ներս մտած ատենս կը տեսնէի տիւղիւնաներով ընկերներս՝ որոնք կակուղ տեղերնին բռնած՝ ճւղիկ ճւղիկ կուգային:

Ինչ որ է, աղօթքնիս ըսելով կսկսէինք բարձրաճայն ու եղանակաւոր կարգալ. «բ', ա', ԲԱ', բէն, ե, Բէ'. բէն, է, Բէ'. բէն, ի, Բի. բ, ո, ԲՈ. բ, օ, ԲՕ»։ Այս միջոցին ինքն ալ շաղաքի ձիու պէս մէջերնիս դառնալով՝ ամէն մէկ վանկին հետ՝ գաւազանի մէյմէկ հարուած կ'իջեցնէր, կը պոռար, միսերնիս կ'ուրէր, կից կուտար, վերջապէս՝ ընութեան իրեն նկատմամբ գործած անօրէնութեան վրէժը մեզմէ լուծելով քէֆ կ'իմանար: Այս տանջանքը կը տեւէր մինչեւ կէսօր, ճաշի ատեն:

Սեղանատուննիս, դարձեալ հոն, այսինքն՝ ժէլէ Ֆուէններու հոսեղինա՞ց համալուար գործարաններուն քովիկն էր, մեր աւագ ընկերներուն անցուղարձին, ցերեպեցակ ձայներու շէն շէնիքին մէջ տեղ:

Կերակուրի սկսելէ առաջ՝ տարօրինակ արարողութիւն մը կար, այն էր Պատուելիին բաժինը: Այսինքն՝ Պատուելին առջեւէն, տնտես ախպարն ալ անոր ետեւէն ձեռքը ափսէ մը բռնած՝ կարգաւ սեղաններուն շուրջը կը դառնար, կերակուրնիս աչքէ կ'անցընէր ու թէ որ ճիշտ soqանաճազ բան մը կար՝ աչք կ'ընէր տնտեսին որպէս զի վերցնէ: Այսպէս, ափսէին մէջ կը տեսնէիր, 3 հատ եալանձի տօլմասի, քովը՝ 2 դգալ մախառնա, կէս էնկինառ, կտոր մը թային հէլվասի, մէկ երկու դգալ թօրպա եօղուռտի, եւլն. եւլն., զորս ժոււմ ժոււմ մինչեւ իրինկուռն զըխմալանմիւ կ'ըլլար: Սա պարագան միայն մեզի համար նպաստաւոր էր որ, տիշլէկ ըլլալուն համար չոր պտուղներու չօխլուխ եանաշմիշ չէր ըլլար:

Շատերնիս ալ, դիտմամբ, սակառնուած մէջ պատուելիին նախասիրական ուտելիքները կը դնէինք՝ որպէս զի ծեծի մասին քիչ մը սփոքօ ընէ. սակայն կարծես թէ՝ եռու մուրճախ մարդը քանի ուտէր՝ այնչափ աւելի խուտուռմիշ կ'ըլլար, ըստ առածին թէ «խույլու խույունտան վազ կէչմէզ»:

Ճաշէն յետոյ՝ դարձեալ սենեակին մէջ հազիւ քիչ մը զբօսնելու սկսած, և ահա պատուելին, գաւազան ի ձեռին կ'իյնայ վըրանիս.

— Ծօ', շունչանորդի բիճեր, տահա չէ՞ք պառկիր:

Այո՛, մինչեւ կէս օր միայն, սեօգիւմ եապանա դաս կ'առնէինք, իսկ կէս օրէն յետոյ՝ որպէս զի պատուելին՝ աղայի պէս հանգիստ կերակուր ուտէ, չուպուխ քաշէ, խահուէն խմէ և ըռահաթ շքնաթիւնի քնանայ, մենք ալ անպատճառ և ծեծին վախէն պիտի քնանայինք, մինչեւ որ դարձեալ գաւազանին հարուածները դային մեզ արթնցնել:

— Ծօ՛, շանը ձընածները, տահա կը քընանա՞ք, չափուխ, չըխըննիդ առէք տէ տէֆէղէք:

Ամանը գիտնա մի, մեր ուղա՞ծն ինչ է արդէն: Սակայն չէր մոռնար քիչ շատ բարեկեցիկ տղոց հետեւեալ հրահանգները տալ.

— Ծօ՛, Գէորգ, սուտուիդ իզմէ բարեւ ըրէ, ըսէ քի պատուելին մէտէն քէշկէկ կուզէ կոր:

— Նիկողոս՝ս, մօրդ ըսէ քի, թաղէ եափուախով եալանձի տօլմաօի մը դնէ, եւլն:

Հիմայ, Ազնիւ ընթերցողներ, այս անցեալ՝ բայց ԻՐԱԿԱՆ պատկերին՝ այժմեանին հետ ունեցած տարբերութիւնը դուք ըրէք:

ՏԻՇԼԷԿ

ՏԻՐՈՒՆԻ

Յաւօք կիմանանք քե՛՛ Ասա-բազարի ազգայիններէն Տիար Սուրեն Նազարեթեան կընձաւ է իր մահկանացուն 20 տարեկան ծաղիկ հասակին մէջ, եւ որուն յուղարկաւորութեան թխուր հանդեսը կասարուած է տեղւոյն Ս. Հրեհակապետ եկեղեցիին մէջ, ի ներկայութեան խուռն բազմութեան մը:

Սուրեն ԷՖ. Նազարեթեան համայնքին պատիւ բերող անձնաւորութիւն մը ըլլալով՝ իր գովեստը կը կարդան ամեն անոնք՝ որոնք իր բարւոք եւ օրինակելի կեանքին մօտէն տեսնակ են:

Խմբագրութիւնս, այս թխուր առթիւ՝ իր ցաւակցութիւնները կը փութայ յայտնել՝ յիշեալին ծնողաց եւ պարագայներուն:

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ժամացոյցէն առնելիք դասերնիս. — Ամուսնացողները եւ Գասաւսանական Խորհուրդ. — Պզտիկ տեսակցութիւն մը. — Գում-գաբուի Աղբասախմամբ եւ իր բժիշկը. — Հիւանդ մը ... անմիջական դարմանի կարօտ. — Սարգիս Ղուկասեան:

— «Դասը ... դասը կըսեն շատեր անցեալ շաբթուան Գրոնիկա կարդացողները:

— Բարեկամներ դասը չա՛տ է ու պէտք է որ պզտիկ անդրադարձում մը ունենանք այդ ճշմարիտ պատմութեան վրայ, զոր Դիտող պատմեց ձեզ:

Պարոններ՝ ... որոնց ճակատը նարօտ կապուած է.

Ա. — Չանացէք — նշանած եղած ատեններդ — ինքզինքնիդ հարուստ ունեւոր ցոյց չտալ և ձեր նիւթականին վրայ ոսկեղոծ փոշի չը ցանել:

Բ. — Հասկցուցէք ձեր նշանածին որ, կեանքը ամուսնութեան մէջ նիւթականէն աւելի համերաշխութեան մէջ կը կայանայ, քանի որ եղած տեղը կապելու գեղեցիկ սովորութիւնը կայ ու կը մնայ յաւէտ:

Հետեւաբար միւս կողմէ ալ կանայք շատ ու քիչ պահանջկոտ ըլլալու իրաւունք չունին, քանի որ այրերը շատ դժուարաւ իրենց օրապահիկը կը ձարեն:

Ո՞ր ամուսինը չը փափաքիր կաղանդչէք տալ իր ամուսինին, բայց ...

Խոշոր բայցը արգելք կըլլայ:

Առաջները դրամը ոչինչի չէր խարճուէր, բայց հիմա չէօր չէօքերու և գլխարկներու տեսակները շատցած են:

Միւս կողմէ Տիկիններ՝, նուազ պահանջկոտ եղէք և պահանջեցէք ... ինչքան որ կը ներէ ձեր ամուսնին քսակը, թէեւ դուք ալ իրաւունք ունիք իբր առհաւատչեայ մը սիրոյ — պահանջել կաղանդչէք մը ... ձեր ամուսնէն, բայց ահա հոս խոշոր բառ մը կը մտնէ ձեր միջեւ, այն է՝ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ:

* * *

Արդ վերադառնալով մեր Տիար և Տիկինները կը յանձնարարենք որ այս վերջին բառը իրենց նշանաբան ընտրեն և ինդիրը բազ-

ուած նկատեն, իրարու հետ հաշտուելով և պէտք չը մնայ իրենց դիմել Դատաստանական խորհուրդին, որ այս միջոցներուս արդէն շատ զբաղեալ է և չը կրնար ձեր խընդիրը լսել:

Այս է Դիտողին և իր ընթերցողներուն ալ փափաքը ... անշուշտ:

* * *

— Շատ զբաղած եմ կըսէր Դատաստանական խորհուրդը:

— Ինչո՞ւ:

— Գանի որ ամէն շաբթու ամուսնացողներու երամ մը ինծի կը դիմէ, որոնց մէկ մասը կը հաշտուի, իսկ միւսը իր պահանջումներուն մէջ կը մնայ և կըսպասէ ... լուծման:

— Բայց ինչո՞ւ այդքան բազմութիւն:

— Որովհետեւ «Համերայխութիւն» բարեկամս՝ բաւական ատենէ բացակայ է մեր մէջէն, և կըսուի թէ ծանրապէս հիւանդ է, դժբաղդաբար Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը չէ ընդունած զինքը:

— Անցեալ շաբթու ամուսնական նոր խընդիր մը ունեցար:

— Այո՛, որուն աղերսագիրն ալ կարդացիր «Մանգումէ»ի մէջ:

— Բայց ի՞նչ սարսուցուցիչ աղերսագիր էր:

— Անոնք ալ նոր ամուսնացած էին, և տակաւին ի՞նչ նոր ամուսնացողներ, որոնցմէ շատեր կը վազեն ինծի կը դիմեն:

— Է՛, ինչ պիտի ընես:

— Շուրաւ եմ, չեմ հասնիր, մէկը ամուսնալուծում կուզէ՝ գլխարկ չունենալուն համար, միւսը ինծի կը չարչարէ կըսէ, ուրիշ մը կաղանդէք չի տալուն համար, վերջապէս ամէնն ալ այնչափ ոչինչ բաներ, որոնք եթէ իրենք քիչ մը բարի կամեցողութիւն ունենային պիտի կրնային իրենց խընդիրը, իրենց ձեռքով կարգադրել:

— Ուրեմն:

— Ուրեմն ուրիշ անգամ ցտեսութիւն, քանի որ շատ խնդիրներ ունիմ ուսումնասիրելիք:

* * *

Աղքատ ու կարօտ հիւանդ կին մը անմիջական դարմանի պէտք կուենայ Լանկաի մէջ, կը դիմեն Գում-գարուի Աղքատախնամին, որ անմիջապէս քառթ մը կուտայ ա-

մուսինին ձեռք «կարեւոր» բառերով մակագրուած, ու միւս կողմէ հիւանդին տունը կը զրկէ — միշտ Աղքատախնամը — ածուխ, կաթ, միս եւ այլն, բժիշկը՝ նրբամարմին, շատ աղաչանքներէ վերջ 3-4 ժամէն հազիւ կերթայ հիւանդին և հապճէպ քննութենէ մը վերջ կը մեկնի երկրորդ անգամ գալու խոստմամբ: Հիւանդին վիճակը կը ծանրանայ, բըժիշկը չի գար, կրկին կրկին կը դիմեն չի գար, գիշերը կը հասնի ալ հանդուրժելի չէ հիւանդին վիճակը և դայեակը պատասխանատու չըլլար, գիշերուան ձիւնին ու փութին կը դիմեն Տօք. Ալլահվէրաի, որ անմիջապէս կը հասնի ու կազատէ հէգ թշուառ կինը ... շատ ոչինչ այցելադնի մը փոխարէն որ ամուսինին բարեկամներէն մին վճարած է:

Ու ամուսինը որ լալագին կը պատմէր իր խորունկ շնորհակալութիւնը կը յայտնէր Աղքատախնամին ու յիշեալ բժիշկին, բայց կը դարմանար թէ ինչո՞ւ Աղքատախնամին այդ բժիշկը իր պաշտօնը խզմտորէն չը կատարէր:

Դիտող ալ այդ կը հարցնէ թախանձագին և կը խնդրէ Աղքատախնամէն որ հաճի պէտք եղած կարգադրութիւնը ընել, քանի որ բաւական ատենէ չորս թաղերու մէջ բժիշկի այս տեսակ խնդիրներ պակաս չեն:

* * *

Վերջաբանը Քրոնիկիս քիչ մը տխուր, բայց պէտք տեսայ յիշատակել, քանի որ մոռցուած դէմք մ'է որ պիտի ներկայացնեմ:

Կիրակի Մազրի-գիւղի մէջ թաղեցին Սարգիս էֆ. Ղուկասեանը, որ ժամանակին գըրավաճառ ու միանգամայն գրագէտ մը եղած էր, թէեւ հիմա վաճառատան մը համարակալն էր, ինք ազնիւ ու զարգացեալ անձ, Դր մահը անկեղծ վիշտ կը պատճառէ զինքը ճանցողներուն:

1871ին թարգմանած է Գաթրֆրափի մարդարանութիւնը 3 մասէ բազկացած (տըպագրութիւն Գ. Զարդարեան) և 1879ին Դիւաբնակ բլուր Էօժէն-Սիւի, 2 հատոր (տպագր. Տէտէեան Իզմիր), այս երկուքն ալ գեղեցիկ ու սահուն լեզուաւ մը. 1872-1876 գրավաճառութեամբ զբաղած է:

Ս. Ղուկասեան և Եաղմաճեան գրատուն անուամբ, բայց ինք այնքան համեստ իր գրական աշխատութեանց համար, որ երբ կը յիշեցնէինք իրեն թէ թարգմանած է Մարդաբանութիւնը և Դիւաբնակ բլուրը:

— Չեմ յիշեր կոր, իրաւ ատանկ բան մը թարգմանած եմ, կարծեմ:

Ու կէս ժպիտ մը կը թրթռար իր չըթանց վրայ:

ՄԱՏԱՄ ՖԸՌԹԸ...

...ԱՄԱՆ ԱՐԹԸ...

Բարին Աստուած առաջին մարդը ստեղծելէն — չատ չէ — երկու օր վերջ՝ զոջալով, իր զոջուժը քաւելու համար կին արարածը զլուխը փաթկեց, զայն շաղուկով աշնպիսի տարրերով՝ որոնք գլխովին պիտի հակառակէին մարդուն մինչեւ ի կատարած աշխարհի։ Եւ ահա ինչո՛ւ այն օրէն այս օր, այր մարդիկ ինչ որ քաշէն կնոջ երեսէն, անոր պատճառն է և պէտք է ըսել Ֆրանսացուց բերնի ծամոց բանաձևը՝ cberchez la femme որ հացին պէս օհոսէ լըլար երբէք։

Երկրաշարժէն տուններ կրնան ըլլալ որ լիւնին, բայց նորէն չինելը բան մը ըսել չէ, պէտք է գիտնալ որ կնկան փոքուցած տունը ոչ տիւրկէր թաթոսը և ոչ ալ Վալսոնի պէս ճարտարապետներ կրնան վերականգնել, Հակադարձաբար, կիններ կան՝ որոնք տուններ կը չինեն, և նոյնպէս ըսենք որ՝ կնոջ չիւած տունը միւսիւ էյֆէլ անգամ չի կրնար կանգնել, հակառակ էյֆէլի աշտարակին չափ բարձր չէնքի մը բլանը յղացած ըլլալուն։ Եւ ասանկ է միշտ։

Բայց, տեսէք որ կնութեան առած կամ առնելիք աղջիկնիդ ձեր առաջին տեսութեան մէջ չի գար ձեր ակոնջին ըսել « ինծի կառնես կոր ամա՛ ես տունդ պիտի փոցունեմ », այլ այս սեռին է՛ն մեծ վարպետութիւնն է՝ ծածկուիլը։ Պսակին տակ գառնուկ մը կունենաւ դէմդ քողարկեալ, վերադարձին կառքին մէջէն իսկ գայլի կը փոխուի, ե՛ւ քսան և չորս ժամ վերջը ... վազր, որուն ճիրաններէն ազատելու համար մէղսութեան թօզիէն ուրիշ փրկարար դեղ մը չէ գտնուած մինչեւ հիմա, և սակայն օր մը երբ թոքախտին դարմանը գտնուի, վոթկած կնիկներէն ալ ազատելու միջոցը կարելի է որ յղացուի, բայց հիմա ... նօ քեռես։

* * *

Բարթիկ աղան, տղայ տարիքէն գաւառէն եկած Պալիս հաստատուած, և հոս կա-

պած ըլլալով եիւքը, ինչպէս սովորութիւն է ըսել՝ վերջէն դրամ դիզողներու համար, ամուրիութեան կեանքի լուծը թոթափելով՝ տուն անդ ընտանիք կազմելու յուսով և փափաքով կամուսնանայ օրորդի մը հետ, որ Նոր Զէլանտայի ջուրերուն պէս խախտմիշ կըլլար, այնքան տաք արուն, այնքան վըռթկած։ Բայց ինչպէս ըսինք, իր այս գովելի (.) առաւելութիւնը այնքան վարպետօրէն կը ծածկէ նշանածութեան բեռիօսին, որ մեր Բարթիկ աղան թագէ ետքալով զրուած տօլմայի պէս կը կլլէ և հարսնիքը տեղի կունենայ։

Նկարագրականը՝ զոր պատիւ պիտի ունենանք ներկայացնելու մեր ընթերցողաց, կսկսի հարսնիքէն ամիս մը վերջ, երբ Զարուհի՝ կուամ Որբօէն վերջ սուրբին մասքէն հանող տօմիսօներու պէս լինքզինքը և ինքնութիւնը կը պարզ փառաւորապէս և գոյնը դուրս կուտայ։

Բարեկենդանէն առաջ Պալսոյ չատ մը արուարձաններու բնակիչներուն սովորութիւնն է այս եռուզեռ շաքաթները անցնել Բերա, ուր անպատճառ ազգականներ մը կունենան, հեռու կամ մօտ խնդիր չէ։ Ահա նոյն նպատակաւ Տիկին Զարուհի, փափաքելով այս ցատկիմի և ուտելաբանական օրերը հոգ վերը անցնել, երկու երեք ճիւղէաբանութեամբ կը յաջողի համոզել իր ամուսինը, և ճամբայ կելլան Կիրակի՝ խաբու խաբամա միտաֆիր ըլլալու համար տիկնոջ թէյդէին տունը ... ուր անցուցած էր աղջիկնութիւնը։

Կամուրջին վրայ։

— Զարուհի, կեօղիւմ, ատըմներդ կարճ առ, ավի չունի պէս լեզուս դուրս ինկաւ, կըսէ Բարթիկ աղա բուֆլամիշ ընելով։

— Էյ ճանըմ, թրիս նէֆէս ես նէ՛ առապա մը բռնէիր, կը քալեմ կոր իշտէ ... կը պատասխանէ Զարուհի՝ գլխարկին խառախօնճօղ թիւյերը ճոճելով։

— Աղէկ ամա ետվրում, սոն վարօսին հասնելու չենք, մինչեւ գիշերուան երկուքը հէմ թռամվայ կը բանի հէմ թիւնէլ:

— Զիյտեմ ալթըն քալէ իշտէ ...

— Քա ճանըմ, քալելն ալ եօլ էրքեան ունի, գիտես քի բիրէնքեր կը պտըտին կոր վուճուտիդ վրայ ... հօբուռ հօբուռ կուգաս կոր կընի'կ ...

— Նինէիդ տարիքը չէի քի տնտնամ, կէնճութին է ասիկայ, հէլպէթ պիտի կոտորտուիմ ...

— Քա սօլուխս քա՛, կայնէ տէ լան նէֆէս մը առնեմ ...

— Մախսուռ կընես կոր Բարթիկ աղա՛... չօգ չէյ, գեղը չենք, հոս Պէյօղլու է թէթիկ ըլլալու է թէթիկ ...

— Քա քեզի ո՞վ ըսաւ քի Բարթիկը եան քէսէճութան ելաւ տէյի ... ինչի'ս թէթիկը պիտի ըլլամ ... կըսէ Բարթիկ աղա արագ արագ չունչ առնելով:

— Քու տարիքդ մարդիքը պուճախը նըստելու տէ էնֆիէ քաշելու են, դուք ո՛ւր կարգուողը ո՛ւր, կէնճ կընիկ առնողը ո՛ւր...

— Վա՛յ ... ասանկ եղաւ, հա՛ խուշըս... տէրտէրին առջին ինչո՛ւ չըսիր ատ խօսքը տէ, հիմա կլոխս շումանտըռաին կապելէդ ետքը կը զուրցես կոր ...

— Ան վախտը չըսի տէ հիմա կըսեմ կոր, ի՛նչ պիտի ընես ...

— Ծօ նէֆէսի՛մ ... ծօ եիւրէի՛մ ... ըօելով՝ մինչ հեւ ի հեւ կնոջը ետեւէն կերթար, կը կրկնէ,

— Քա իրաւ քի Աւետարանը ըսեր է քի թողցէ զհար իւր և զմար իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ ... Ֆախաթ չէ ըսեր քի ետուըլ պէկիրի պէս տէօրթ նալի ելիր տէյի... սա հալս նայէ քա՛ ...:

Նոյն միջոցին շնորհքով հագուած մէկը տիկնոջ մօտենալով,

— Բարեւ Զարուհիս ... ո՛ւր ասանկ...

— Օ՛... բարեւ միւսիւ Օգսէն ... ո՛ր չափ փոխուեր ես ...

— Հապա դո՛ւն խուշս, որչափ ատեն կայ որ քեզ տեսած չունէի, բայց աչքերդ՝ կերդնումքնաւ փոխուած չեն... ո՛ւր ասանկ:

— Բերա, բարեկենդանը հոն անցնելու...

— Ուրեմն պիտի կրնանք տեսնուիլ, ո՛ր կողմը ...

— Հայտէ նայինք Զարուհի, իսկիմդ տեղն իքէն ճամբայ առ կըսէ Բարթիկ աղան տեսնելով որ իրեն համար անծանօթը ոկոած էր բորեազէն վերջ փչող լոտոսէն հալող ձիւներու պէս սուլանմիշ ըլլալ:

— Դուն երկնցիր ճանըմ, միւսիւ Օգսէնը միշտ չեմ կրնար տեսնալ, արդէն կամոց քալել կուզէիր կոր, ես քեզի կը համնիմ ...

— Աղէկ ամա, ասըլ հիմա իսկիմին լիպուան բռնեցի, ասիօն կոխէ տէ ճամբայ ելլանք ...

— Ներեցէք, ձեր քալալիէն կրնամ ճանչնալ, կըսէ Օգսէն, պիտեորուն տակէն խնդալով ... կարծե՛մ ...

— Այո՛... Բարթիկ աղա՛ն է ...

— Բարթիկ աղա, լսած ըլլալու եմ, այսինքն ...

— Առ սա տասնոցը տէ էրիկս է ըսէ քա, ա՛յկ օլսուն, նասըլ նամուսիդ կը դպչի կոր էրիկս է ըսելդ ...

— Ամուսինս է, այո՛... Ժը վիօ քը վուառ Օգսէն ...

— Ավէք բլէզիո մատամ, քան վուվուտէ ...

— Ժը սըռէ ա Բանկալթի, տըմէն վիէն մը վուառ ...

— Սան ֆօթ մատամ, օ ուըվուառ ...

Ու կը մեկնի:

— Էյ հայտէ ճանըմ, քիչ մը քալէ Բարթիկ աղա՛ ... չօգ չէյ ...

— Էօքսէն գնաց, դուն ալ ետեւէն գընայ տէ չըղըթմա եղիր ...

— Ինչե՛ր կըսես Բարթիկ աղա՛, սիրտ չունիմ քեզի պատասխան տալու առնելու, քէչկէմ ճամբայ չելլայի ...

— Դուն ինծի հետ ճամբայ ելլալուդ բիւշման կըլլաս կոր, ես իսէ կարգուելուս վրայ կը մտմտամ կոր քի, ի՛նչ ֆալցօ մըն եմ ըրեր տէյի ... ո՞վ էր քա ատ էօքսէն ...

— Նասըլ էօքսէ, միւսիւ Օգսէնն էր իշտէ, իմ բարեկամներէս մէկը ...

— Մէկ աղջիկ մը աղապօթեանը իրաւ է քի էօքսէի վախը կունենայ ամա, խաֆէսը մոտալուն պէս ամէն բան կը լմնայ, դուն կը նայիմ կոր քի հալէ տալէ տալ թըռչիլ կուզես կոր ...

— Ինձի նայէ Բարթիկ աղա, կարգուեցայ նէ նորէն նոր դպրոց չեկայ ...

— Ես ալ կարգուեցայ նէ չալվարլը այվաղ չեղայ քի պոչիդ թախմիշ ընես տէ ու գած մարդուդ հետ կէօրիւշմիւշ ըլլաս, ես ալ ասդին երկու ծառքս փորիս վրայ զնեմ պէքէյէմ ...

Այս կոիւնները թերեւս չարունակուէին դեռ, սակայն թուամվային մօտ եկած ըլլալնուն՝ երկուքը մէկ ներս կը մտնան:

Կառքին մէջ Բարթիկ աղայի ծանօթներէն տարեց մէկուն կը հանդիպին, որ իսկոյն մօտը տեղ կը բանայ,

— Օ՛... հրամայեցէք Բարթիկ աղա, շիւքիւր կէօրիւշմիւշմիւշդ ...

— Ասծու բարին ... Միքայէլ աղա, ո՛ւր ես ճանըմ չեմ տեսնար կոր ...

— Էյ անանկ չըլլա՞ր մի ես, հրամանքդ տա՛նա նոր ... գիտնալս մատամն է ...

— Հա մոռցայ, բռնզանթէ ընեմ ... մատամն ...

— Աստուած մուհապէթ տայ ...:

Նոյն ատեն Տիկին Զարուհի՝ քովը նստող մէկը որ Ստամպուլ թերթը կը կարդար, անոր վրայ կը նայի անտարբեր, չուզելով լսել տոնոց խօսակցութիւնը:

— Նա՛ Զարուհի ներկայացնեմ, Միքայէլ աղան, իմ հին բարեկամներէս մէկը ...

Զարուհի առանց ասդին նայելու լրագրիւրին վրայ կը նայի:

— Զարուհի՛, Միքայէլ աղան, բռնզանթէ կընեմ կոր ...

— Հասկցանք ճանըմ խուլ չեմ, շատ լաւ մէստի, կըսէ և կրկին կը շարունակէ թերթին վրայ նայիլ:

— Գիտնալս Բերա կեւաք կոր կըսէ Միքայէլ աղա, խօսքը Տիկնոջ ուղղելով:

— Քեզի է Զարուհի՛ գիտնալս Պէյօղլու կեւաք կոր կըսէ կոր ...

— Հասկցա՛նք ճանըմ խուլ չեմ, դուն ալ կրնաս պատասխան տալ ...

— Անանկ է ես, աս չաբաթներուն Պէյօղլուն կը քաշուի, բէք աղէկ կընէք կոր, մարդս քիչ մը զուարճանալու է ...

— Մեր Զարուհիին թէյգէին կերթանք կոր, Բանկալթի, անունը ինչ էր Զարուհի...

— Դիտմամբ կընես կոր Բարթիկ աղա...

չօգ չէ՛յ ... երկու երեկ մարդ խօսած տանը կին մը ինչպէս կուզէս որ միջամտէ...

— Քա չընեմ ըսի ամա բաթլամիշ եղայ, քէօրիւրին վրայի էօքսէին նասըլ եարըշմիշ եղար ... հէ՛ ... հիմա կիւճդ կուգայ կոր ...

— Աստուած իմ, մարելս բան մը ըսել չէ ...

Բարթիկ աղայի մօտը նստող ուրիշ մը կառքէն վար իջնալով դէմի ծանօթը՝ Միքայէլ աղա քովը կուգայ կը նստի,

— Ա՜ք կընես աղբար ամա՛ ... ճայիր ճայիր էրեր ես ... աս ո՛ւրկէ գտար տէ տոբր ...

— Սուս եղիր սուս ... անմարելի կրակ մը քի՛ ... մէտէթ Ալլահ ...

— Պէ ախպար, անէքի կարգուելու միտք ունէ՛ր նէ ըսէիր էրկիրէն ըռնտիկ աղջիկ մը բերել տայի, աս Պոլսեցիները քիւլին ասանկ են իշտէ ...

— Ախպար, առաջ ասանկ չէր շան ճըգնածը, խուզիի պէս երեւաց, ետքէն բնութք փոխեց, հիմա ալ ասանկ խաֆա կը բռնէ կոր ...

— Էյ տէֆ ըրէ վէսսէլամ, մէկ պորտ էշ չէ՛րք ա՛ ...

— Էս անոր հալխան քիթին կանցունե՛մ ամա՛ սըրային կը պէքէյէմ կոր, դուն հոգ մընէր, վախթը սահաթը կայ ...

Այսպէս գլուխ գլխի տեսակցած միջոցին յանկարծ Տիկինը ոտքի ելլալով,

— Տուր քօնտիւքթէօն, կըսէ և վար կիջնայ կառքէն:

— Ա՛ս ի՛նչ է ... ուր կերթայ կոր ... խօսք կառնէ Միքայէլ աղա:

— Ճէ՛հէլլէմ ալ երթայ նէ ետեւէն պիտի երթանք, Սուրբ Գիրքը ատանկ է գրեր, ըսելով՝ Բարթիկ աղա անոր կը հետեւի:

* * *

Թէյդէին տունն է տեսարանը:

— Վո՛ւյ աղջիկս, բռնով եկար հազար բարի, իմին քիշմիրի Զարուհիս, պօյըդ սիրեմ... մէյէր պարկենտանք ըլլայ քի էլիզա տուտուդ բնառես ... կըսէ ջատուկը սուլու սուլու պաքնելով Տիկնոջ երեսները, պաչիկներ՝ որոնք լափ լափ իրենց յետքը կը ձգէին բուտոտայոտ այտերուն վրայ:

— Աչքերնիդ կը պաղեր կոր ...

— Պաղելն ալ խօսք է, քանի օր է աչկա դուռը մնաց քի կուգան տէյի ...

Ու մինչ Տիկինը հայելին դէմ գլխարկը կը հանէր, էլիզա տուտու մօտը երթալով,

— Կլխաւորդ է քա ...

— Կետինին տիպը անցնի, չի հաննէր առնելու ...

— Քա ես պիրտէն պիրէ աչճի գիտցայ տէ սէվինմիչ եղայ քի՝ Զարուկա զէնկին տեղ է ինկէր տէյի, անանկ է նէ խաթըը հարցունեմ մէյմը:

— Բարով էք եկէր աղա, աֆ կընես պիրտէն պիրէ չի ճանցայ ...

— Ես ալ անան կը նայիմ կոր տէ ինքզինքս չեմ ճանչնար կոր, դժն ուրկէ պիտի ճանչնաս ...

— Տէր ողորմեայ, ա՛տ ի՛նչ լախըռտը է, քա Զարուկ նայէ աղադ ի՛նչ կըսէ կոր ...

— Աման թէյդէ՛, սիրտ ալ ունիս տէ կայնէր ճիւղէ կընես կոր ... սա պառկելիք օտաս ցուցուր տէ բաներս տեղաւորցնեմ ըսելով՝ դուրս կելլայ, թէյդէն ալ ետեւէն:

— Քա Զարուկ, սա մաթուֆը՝ քեզի խամէթ եղաւ, վախ ետվրո՛ւմ, չորնամ ...

— Քաշածս մինակ Աստուած գիտէ թէյդէ, եկայ քի քիչ մը ֆէռահ ընեմ տէյի..., ինծի նայէ, միւսիւ Օգսէնը տեսայ՝ խօսք տուաւ քի կուգամ տէյի, Պաթիսթին ալ խապար ըրէ, Լեւոնին ալ երկնցիր մէյ մը, Արթաքիին ալ իմացուցէք քի հոս եմ տէյի, թող գան տէ էյլէնմիչ ըլլանք ...

— Քա աղջիկ, ազէկ կըսես կոր ամա, սա հէրիֆը եաման պան կերեւայ կոր ...

— Ակումները ճէպս են թէյդէ, հիչ հոգդ մընէր, խուտուռու մայմուն դառցուցած եմ դէմս ...

— Ես ելլայ բանայիր բանայնէ կլխուս... գիտես քի դողի չեմ իգար ...

— Դուն ըսածներս ըրէ, պաշխա պանի մի խառնուիր, կէնճ կընիկ առնողը մէկ աչկը քէօռ պիտի ընէ ...

— Էյ ատ ալ կա՛յ եա՛ ... նէ իսէ, ըսելով անմիջապէս շալը գլխուն կառնէ՝ դուրս կելլայ, Զարուկին հրամանները գործադրելու համար:

Ներսը Բարթիկ աղա, որուն վիճակը կըր-

նան երեւակայել մեր ընթերցողները, ոտքի վրայ, պատերէն կախուած ձեռագործները դիտելէն ձանձրացած ինքնիրէնը կսկսի խօսիլ:

— Ծօ նէ խաթ եէտիմ ատամլա՛ր ... , ծօ՛ կիւղէլիմ ըռահաթուլինս, ծօ՛ ան կիւղէլիմ տուղունուլինս, ծօ՛ աման եարապպիմ, ի՛նչ իպլթ ուտելու կարգուեցայ տէ սա փորձանքը գլոխս փաթթեցի ... ու գեռ պիտի շարունակէր իր սիւլօկը, յանկարծ դուռը բացուելով՝ Տիկին Զարուկի ներս կը մտնայ,

— Ի՛նչ է ան, կերթա՛ս կոր Բարթիկ աղա ...

— Հրամմեր էս մատամ, ֆէնէնը քանի՛ն բերեմ ...

— Նասը՛լ ֆէնէն, Պէյօղուին հավան բէք սէրթ եկաւ ինծի կուգայ քի ...

— Ի՛նչ գիտնամ, ուշախի տեղ կը դնես կոր տէ անոր համար կըսեմ կոր: Ինծի նայէ Զարուկի, ալթըն հէրիք է, վրաս իշուածք պիտի գայ, մեռնիմ պիտի, ուզածդ պիտի ըլլայ ամա, հիչ տէյիլ իսէ սիրտիդ տէրտ ալ կըլլա՛յ եա ...

— Մենք վարժարանը անաթօմի ալ կարդացեր ենք, բան չենք ըլլար ...

— Ես ուզածիս սէս անաթէմա մը կարդացունեմ տէ նայէ նասը՛լ կըլլաս ...

— Նէ իսէ, կը մեխքնամ կոր քեզի ալթըն, սա ծառքս պագ տէ ներեմ ... կըսէ Զարուկի մերկ թիւը երկարելով ...

— Ա՛խ ... ատ միսերուդ համար չէ՛ քի կը քաշեմ կոր նէ, կընիկ չէ՛ք մի ... մեռելները տիրիլթմիչ կընէք, ուզէք նէ ալ տիրիները խողը կը խոթէք ...

— Կուգեմ որ միւտ ալաֆուանկան յարգես և ինծի հետեւիս, խօսքէս դուրս չելլաս, ուր երթամ, ինչ ընեմ նէ չի խօսիս ...

— Մէջքս սախաթ ըլլալուն պաշ աւել, օթթայի խզմէթ չեմ կրնար ընել ... ի՛նչ կըսես կոր քա, իս այլա՛դ առիւր չէնէ մի եանաշմա ...

— Տեսա՛ր, կէնէ պոճոզդ կը դառցունես կոր, ձեռքս պագ քի վրադ շնորհք գայ ... կը կրկնէ Տիկինը ձեռքը չրթունքներուն մօտեցնելով,

— Ես Տէր Արիստակէսին ծառքը պագի

աս պէլաները մտայ, հիմա ալ սատանային ծառքը պագնեմ քի բիւսթիւթիւն թէմիդը ելլամ, կըսէ ու կէս մը համբուրելով՝ գրեթէ կը հաշտուին այր և կին:

* * *

Գիշերուան ժամը մէկին յաջորդաբար նախապէս հրաւիրեալ չորս երիտասարդները տուն կուգան և շիտակ վերի սենեակը ելլալով կսկսին տաքօրէն տեսակցիլ Տիկնոջ հետ, ոմանք զաղիներէն, ոմանք ալ հայերէն, ու այս անակնկալ հիւրերը տեսնող Բարթիկ աղան տան տիրուհին, թէյզէ էլիզա տուտուին քովը երթալով կը հարցնէ,

— Խեղճերնք տեսնաս, զաւկներդ են...

— Չէ մամ չնորհակալ եմ, պղտիկէն, բիւթիւնն ալ ծառքս մեծցած են սէպէթի...

— Հոս վախտով վարպետ տուտո՞ւ էր... գիտնալս Զարուկն ալ կիրկըդ մնտած ըլլալու է քի բիւթիւնը մէկ եկան նէ հին օրերը միտուրնին ինկաւ...

— Զարուկիցայիս ախպապներն են իշտէ ինչ գիտնամ, կէնճ ու կանանչ տէլի խանլըներ, վրանին կը նայիմ նէ սիրտս պախճաներ կը բացուի կոր...

— Աստուած սիրտիդ կէօրէ տայ ամա, ես ալ վրանին կը նայիմ կոր նէ ինքզինքս Զնտանը կը գիտնամ կոր...

— Աման Բարթիկ աղա՞... ճահիլ եղած չունի՞ս դուն, աս ալ ասանկ օր մըն է թող երթան քիչ մը ճիւղալիւ ընեն...

— Քա աղէ՛կ ամա, Զարուկը իմ աղջիկս չէ, կընիկս է, նամո՛ւսս...

— Էյ վայ մէղքիս, ինչ կը տեսնաս կոր քի... հի՛... քար պերնիդ, հոստեղը Պէյօղլու է, ատ լախըռտըն մէյ մըն ալ մըսէր, մարդը այրպամիշ կընեն...

— Էյ քեզի ո՞վ ըսաւ քի Բարթիկը կէնճ կընիկ առաւ քի, Պէյօղլուին տէլիխանլըները վախիթ անցունեն տէյի...

— Ինձի մըսեր, ես չեմ հասկնար, կընիկդ է նէ եուլարը քաշէ...

— Աս տար այդոին մէջը եուլարը փառայ կընէ՞ քա... ինչ ըռէզալէթ է ասիկայ...

Նոյն ատեն Տիկին Զարուկի հասկնալով թէ Բարթիկ աղա երթալով բարկութեան զենիթը կը հասնէր, յոնքերը պոռտելով քովը կը մօտենայ:

— Ինչ է ան կէնէ, ինչ կըլլաս կոր, սանճի՞դ բռնեց...

— Ինչ է եղեր, կը հարցնէ միւսիւ Լեւոն, որ դեղագործ էր, և կէս մ'ալ բժիշկ, մատամ մի վախնաք, նոր սիսթէմ մը ունինք հիմա սանճիի համար...

— Աման ճանըմ չիյտեմ ալթըն, աս մարդը զիս կը մեռցունէ կոր...

— Քա ո՞վ պիտի ըսէ, ինչ ըռէզալէթ է... ըսելուն չի մնար, յանկարծ միւսիւ Լեւոն գրպանէն շիշ մը հանելով բռնի քիթին կը դնէ որ երկուք մը քաշելուն... կը մարի կիյնայ...

— Հիմա տիկին կատարեալ վստահ կըրնաք ըլլալ, որովհետեւ մոռֆինը որ քիթին տուի, տասներկու ժամ պիտի ընացնէ զինքը:

— Էօֆ... փառք քեզ Աստուած, անանկ է նէ ըռախիին թէփսին բերեմ, ըսելով դուրս կելլայ էլիզա տուտու, մինչ երբ տասարդները ձեռքերնին չփելով կը պոռան:

— Պռավօ տօքթօռ... պռավօ...:

* * *

Յիսունէն վեր բարեկամներս, պիտի կարգուի՞ք, լաւ, չէ չեմ ըսէր, բայց սա յօդուածս կարդացէ՛ք, իմաստը ըմբռնեցէ՛ք և ապա ըրէ՛ք ձեր ընտրութիւնը, եթէ չէ՛ք ուղեր որ մոռֆինը քիթերնուդ տալով՝ ձեր երիտասարդ կնոջը հետ վաւիկները բաթ խաղան:

ԼԻԼԱ

ՄՆԱԿԵԱՆ ԽՈՒՄԲԸ Ի Կ. ՊՈԼԻՍ

Երեքշաբթի առաւօտ, մեր սիրուած դերասանապետը Մնակեան էֆէնտի և իր խումբը, Տարտանէլէն Մայրաքաղաքս հասան: Բարեկամներ և համակիրներ բարի գալուստ մաղթելու համար քարափ դիմեցին, և բերկրութեամբ տեսան թէ՛ Պապա Մնակ նոյն կորովը, նոյն վառվռնութիւնը և նոյն քաջութիւնը ունէր հակառակ՝ ճամբորդութեան յոգնեցուցիչ ազդեցութեանը:

Այս լուրը անշուշտ ուրախութեամբ պիտի լեցնէ թատերասէր հասարակութեան սիրտը, և ամէն անոնց, որոնք ձմրան այս տաղտկալի կիրակիները գրեթէ անըզբօսանք կ'անցնէին: Անշուշտ Մնակեան էֆ. պիտի ուզէ գոհացում տալ իրենց, սկսելով իր ռէքէրքուալը Բերայի Վարիթթէ թատրոնին մէջ, ուր պիտի դիմեն ծափահարել, շատոնց ի վեր իր բարոյալից տրամներուն կարօտը քաշողները:

ԿԱՐՈՆՆԵՐ ՍԵՆՏՈՒԿՆԵՐ

ԵՐԿԱՅՆԱՄԱԶ ՊԱՐՈՆՆԵՐՈՒ ՇՈՒՐ-
ՋԸ... ԵԹԷ ԿԸ ԲԱՐԵՀԱՃԻՆ

Ո՛ւր էք նայիմ երկայնամազ պարոններ,
ձեզի՛ եմ, ո՛ւր կը փախիք կոր բարկութե-
նէս՝ չամհրախալի՛ց բարկութենէս:

Սա՛նկ եկէք երկայնամազ պարոններ,
սա՛նկ ամէնքդ ալ դիմացս շարուեցէ՛ք:

Գիտէ՛ք, երկայնամազ պարոններ կամ
պարոններ երկայնամազ, թէ որքա՛ն ձեր
մազերէն կը վախնամ, կը սոսկամ, կը սար-
սափիմ, վրաս մարելիք կուգայ ու անմիջա-
պէս դեղագործիս ... գիրկը կը նետուիմ,
բան մը որ դեղագործս մի՛շտ յանկարծակիի
կը բերէ, և կարելի է օր մը ... յանկարծա-
մա՛ն ըլլայ, Հիւքօկրատի այդ կէս-աշակերտը:

Ո՛հ, երկայնամազ պարոններ, ջիղերս,
որ ձեր մազերուն բարակութիւնը ունին,
ձեր երկա՛՛ն մազերէն այնքան կը կառոյն
ո՛ր, կ'որոշեն միաձայն հաւանութեամբ թա-
փիլ և իմ ողջ գլուխս ... ճաղատներու աւե-
տարանին տակը դնել. կը տեսնէ՛ք, երկայ-
նամազ պարոններ, որ ձեր երկայն մազերուն
համար՝ մաշած խոզանակի մը թելերուն չափ
կարճուկ մազերս վրայ պիտի տամ:

Դո՛ւք, գիտե՛մ որ չա՛տ կը հիանաք ձեր
մազերուն վրայ ... երբ հայելին առաջը
անցնիք, և անանկ ալ կը կարծէք որ ուրիշ-
ներուն՝ նամանաւանդ գեղեցիկ սեռին հիա-
ցումին առարկան կ'ըլլաք, ո՛վ ... ագեղ սե-
ռի ներկայացուցիչ երկայնամա՛զ պարոններ:

Բայց ո՛չ, անանկ չէ՛, օ՛հ, գեղեցիկ սե-
ռը ձեր այդ երկայն ու գեղեցիկ մազերուն
համար ... զխոսիմ կը հակառակին ... ամէն
բան հակառակ կողմէն դիտելով:

Ինչու ո՛ր, իրենց համար, դուք ... էրիկ
մարդ ըլլալէ կը դադրիք, օ՛հ տխուր նօթը
այս խիստ ... տխուր յօդուածին:

Երկայնամազ պարոններ, նախնական դա-

րերու պարոններն ալ երկայնամազ էին, բայց
ան տեսնը դեռ ... մկրատը հնարուած չէր:

Փա՛ռք Աստուծոյ, հիմակ մկրատը ամէն
սափրիչի ձեռք կը շախախէ, եւ մկրատին
չկերած ապուրը ... մազի մեքենան կուտէ ...
գլուխնիդ ... վերանէ՛ դարձնելով:

Երկայնամազ պարոններ, գիտե՛մ որ դուք
խմբագրի հասունցած ... խմոր ունիք և կամ
բանաստեղծի օղաօլացիկ ... Թեւեր և ասոր
հետ վերսիվէն մը սւտերուդ ... Մուսային
հասնելու համար ... երբ ձեզի առանց ջուր
ձգած է: Այո գիտե՛մ թէ դո՛ւք, դերասա-
նի սովալուկ հալիս ունիք ... որ փորերնուդ
մէջ շրջան կընէ ... աշխարհիս շրջանը ընկու-
տել: Այո գիտե՛մ թէ՛ երկայնամազ պարոն-
ներ, որ արուեստագէտի պատուական ... օտ-
ախ ունիք եւ կամ մանկտին կրթելու, ա-
նոր ուսման ... ջրախառն կաթը ջամբելու,
ու անոր գլուխը գիտութիւնով ... թմբեցնե-
լէ ետքը դպրոցէն ... ճամբելու ընդունա-
կութիւնը ունիք, այո ասոնց ամէնքը ունե-
նալնիդ գիտե՛մ, եւ դուք կը կարծէք որ չե՛մ
գիտեր, ասոր համար կ'սկսիք—որպէս գի ին-
ծի և ուրիշներուն ձեր ունեցած յատկու-
թիւնները գիտցնէք—մազերնիդ ձգել, ո՛հ,
կը ձգէք որ անոնք իյնա՛ն ձեր էյֆելեան
բարձրաբերձաբարձրութիւնով օձիքնուդ վրայ
և համարոյրներ տեղացնեն ... ժամանակէն ա-
ռաջ ազտոտելով:

Երկայնամազ պարոններ, կա՛մ բոլորովին
ձգեցէք մազերնիդ եւ կա՛մ բոլորովին կրտ-
րեցէք:

Երկուքէն մէկը խաթերս համար:

Չեմ ըսեր որ դացէք եւ ձեր գլուխը թիւ
1 մազի մեքենային տակը դրէք ... օ՛հ կը
մեղքնամ գլուխնիդ:

Բայց մկրատը շախախցուցե՛մ ձեր գըլ-
խուն վրայ:

Որովհետեւ մազերնիդ գլխունուդ վրայ
որքան շատ ըլլայ, այնքան ուղեղնիդ կը
ճնշուի և կարելի է որ օր մըն ալ ... ճզմուի
և երթաք պագնէք, Աստուած մի՛ արատ-
ցէ, ձեռքերը ... Հիւանդանոցի յիմարաբու-
ծին ու յիմարապետին.

Կնոջ տկարութեան հետ մասնակից ըլլալ
ըսել է երկայն մազ ձգելը:

Կնոջ խելքը կարճ մազերը երկայն է կը-

սէ առածը, ուրիմն կ'ընդունի՞ք որ, այս առածը, երկայնամազ պարոններ, ձեր վրայ ձեւեմ... դերձակիս վարպետութիւնը ջուրը ձգելով, որ խօսքը մէջերնիս, եթէ ինչայ իսկ ջուրը՝ չթրջուիր, ինչու որ իւղոտ յաճախորդերու այնքան քսուած է որ ինք ալ իւղոտած է և աս պատճառով վրան ջուր չբռնէր... հոսեկի պէս:

Երկայնամազ պարոններ, ատեն ատեն յիշեցէ՛ք որ մա՛նչ ծնած էք եւ ո՛չ աղջիկ... Երկայնամազ պարոններ, երկայնամազ ըլլալէ աւելի... երկայնամիտ եղէք:

Մազերնիդ կտրեցէ՛ք ուրիմն... պեխերնուդ ուժ տալու համար:

Կտրեցէք մազերնիդ, եթէ չէք ուզեր որ նորէն պօռամ երեսնուդ, բայց այս անգամ բոլոր ուժովս, ամբողջ թոքերովս, լիակատար պեովեկովս, բովանդակ պաղորսալիներովս... պաղոր պաղոր պոռամ թէ՛

Ե՛ՐԿԱ՛ՅՆԱ՛ՄԱ՛Ջ ՊԱ՛ՐՈ՛ՆՆԵ՛Ր

ԻՄ ՍԵՆՏՏՈՒՄՆԵՐԸ

Բանաստեղծներու շուրջը... եթէ չեն բարեհաճիր

Աս օրերս, ամէ՛ն քայլափոխիս բանաստեղծներու հանդիպելու... տխուր հարկին տակ կը գտնուիմ, բան մը որ... վրաս փըլ-չելու մօտ եղող յարկի մը չափ տպաւորութիւն մը կընէ վրաս:

Ամէ՛ն քայլիս բանաստեղծ, և եթէ աչքերս գոց քալեմ... վրանին կոխելով պիտի չարունակեմ ճամբաս:

Ուր որ գտնուիմ, ուր որ երթամ, անպատճառ բանաստեղծ մը պիտի ցցուի դէմս... և բանաստեղծութիւն մը արտասանելով գըլուխս պիտի տանի... գանկարանութիւն ուսանելու համար: Բանաստեղծ ըլլալին ո՛ւր կեց կը կուհեմ. որին երկինք նայելն, որին գետին, որին ոտքերը գետնէն վեր՝ թռչաւոր քալելէն, որին չաղանդի պէս ծուռ, որին եայլը, որին կռակի վրայ քալելէն:

Պատահեցաւ որ անցածները Յուսէփ աղաի առաջնակարգ ճաշարանը գտնուէի, հոն կը գտնուէր նաեւ Եղիաթն Բ... տիպը, Գօլօնեան բանաստեղծը, որ ճաշացուցակը վեր բռնած՝ բանաստեղծութիւն մը կարդալու պէս կարդալէ ետքը, ըսաւ ոչ-բանաստեղծօրէն,

— Արմենա՛կ, ինձի բարիճան բեր...

Ո՛հ, ահա բանաստեղծ մը որ... բարիճան կուտէ:

Ես կը կարծէի որ բանաստեղծները միշտ կուտեն ու մեղրամոմի կը վերածեն կերածնին. ահա հակառակը...

Աս հաշիւով, մեր կարդացած ամենախորհուրդախորխորատ մէկ բանաստեղծութիւնը բարիճան ուտելով կը գրուի...

Եւ թերեւս պախալին խանութը կը գըրուին կարգ մը բանաստեղծութիւններ, որոնք մեր սիրտին կը յանձնենք... վաւերացնելու համար:

Հանգստարանին (W. C.) մէջ գրուած բանաստեղծութիւններն են թերեւս անո՛նք՝ որոնք կարդալով կը յուզուինք ու եղեմական պարտէզները կը վերանանք...

— Արմենա՛կ բարիճան բեր...

Ո՛հ, բանաստեղծի մը ստամոքսը ի՛նչպէս կրնայ մարսել բարիճան մը կամ բարիճաններ չե՛մ հասկնար:

Չեմ սիրեր որ բանաստեղծ մը բերանը առնէ բարիճան բառը՝ գոնէ Մուսային խաթերը համար: Բանաստեղծ մը ճշմարիտ բանաստեղծ մը ըսուելու համար, պէտք է Մուսային... ոտքերէն զատ բան մը չդնէ բերանը, որ կարենայ հաւասար չափերով... ոտանաւոր գրել ու անոր մէջն ալ՝ սիրտն ու միտքը... քերթել:

Անցածներն ուրիշ բանաստեղծ մընալ տեսայ որ... ֆեկեկ կերաւ, և Մուսան այս բանին ա՛յնքան դարմացաւ որ... իր մեհէն ալ ուզեց ֆեկեկեկն:

Բայց, խօսքը մեր մէջը, այս օրերս ամէ՛ն քայլափոխիս, անտիպ... և տպեալ բանաստեղծներու հանդիպելու տխուր հարկին տակ կը գտնուիմ...

ՎԵՐՋ ԱՄԲԱԿՈՒՄԻ ՍԵՆՏՏՈՒՄՆԵՐՈՒՆ
ԱՆՄԵՌՈՒԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ... ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԲԵՄԵՆ

Սրտի ցաւով կը ծանուցանենք թէ՛ Հանրապետական 22երորդ թիւը սպառած է. ուստի կը խնդրենք որ, ով որ թերթերը քօլէքսիոն չընէր հաճի խմբագրատունս բերել 22 թիւը եւ ստանալ նոր թիւէն:

Նաեւ, նորէն սրտի ցաւով կը ծանուցանենք թէ՛ տեղի անձկութեան պատճառով յաջորդ թիւով մեր թերթօնը. ամէն:

ԱՆՑԵԱԼԷՍ

ՊԵՏՄՈՒԱԾՔԻ ՁԵՒՈՎ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՕՐԷՆ ԳՐՈՒԱԾ

[Որ ունիցի ունկս՝ ունկն դնելոյ դիցի՝]

Այն ատեն տակաւին տասն և ութամեայ պատանի մ'էի, ոչ Եփեսոսեցի թոռն էի՝ և ոչ ալ Թավչանճեանի եղբայրը, այլ օրավաստակեր (բառ ինչ բարեբարդը) հասարակ մանկանացուի մը զաւակը, որ այն ատեն այդ հասարակ մանկանացուն ալ շատոնց արդէն կնքած էր իր սովորական, հետեւաբար ի պէտքս հացակուտի, Յոբեան համբերութեամբ Լուսաւորչեան տանջանքով, բռնակրային տաժանքով, քրիստոնավայել խոնարհութեամբ, ու գրաստական ստրկութեամբ՝ ստիպուած էի երեսուն զրուշ եօթնեկավարձքով աշխատիլ կամ ծառայել (այս բառերուն նշանակութիւնը ու իմաստը տակաւին մոլթ կը մնայ մեր շատ մը վաճառականներուն) անուանի ու համբաւաւոր վաճառականի մը քով:

Թէեւ տիեզերաց Արարիչը հրամայած էր վեց օր աշխատիլ ու եօթներորդ օրը սուրբ պահել, սակայն ես ստիպուած էի ակամայ շատ մը սուրբ օրեր սրբապղծել, քանի որ կիրակի օրերն ալ մազազանիս բաց էր, և որուն մեղքը միշտ բաթթուելով կը բարդուէր չօրպաճիիս քօւրուխանման պարանոցին, որ Օտեսայի կենդանաբանական արտադրութեանց պէս տրամադիր էր տոկալ տակաւին շատ ծանր լուծերու:

X

Ամառուան կիրակի առաւօտ մ'էր, ու ես պարտաւոր էի ըստ սովորութեան՝ մաղազան երթալ գործիս, ինչ որ կիրակի օրերը ինձ համար ածուխի մաղազայէ տարբերութիւն մը չունէր, սակայն նոյն օր իմ հոգեկան յոյզերս ու խռովքներս, պահիկ մը հանդարտեցնելու, զգայարանական զգացումներուս բնութեանական վայելք մը վայելել տալու ու խոնջած երեւակայութեանս ու մարմնոյս քիչիկ մը կազդուրում ստանալու համար, մտածեցի վաղ քան ընդ առաւօտն ու նախ քան

զառաջին շոգենաւն բացօդեայ դաշտը պտոյտ մը կատարել, որպէս զի ամառուան ծիծաղկոտ առաւօտեան զարթնումին հետ զուարթանայ հոգիս, որ տակաւ ինձ համար աւելորդ բան մը կը նկատուէր, ու կսկսիմ յառաջանալ դէպի դաշտ. հորիզոնը շառագունած է նոր հարսի մը պէս, պայծառ ու անամպ երկինք մը, մաքուր օդ ու դալար խոտ, տակաւ արեւը կը բարձրանայ լուսաշողջոյ ճաճանչացոյ ու ճառագայթարձակ, լեռ, ձոր, հովիտ ու դաշտ, ամէնքն ալ բնութեան հետ հաշտ, արեգին երեւումին հետ իրենց բանաստեղծական ներշնչումներով ծիծաղախինդ կը ներկայանային բանասեր կենդանեացս հաղիւ քնադարթ աչաց, դաշտային շաղաշաղախ դալարիքը գոգցես մարգարիտ կզգենար արեգական ցոլահոյլ ճառագայթեցազդեցութեան տակ, թռչնոց դալալը, առուակին կարկաչը, կովերուն բարաչը, շուներուն հաչը, մարգագետնին կանաչը, զուարթ հառաչ մը (իմա՛ օօօօ) կը պարգեւէին, ու այնպէս մը կազդէին մարդուս զգացմանց նրբանրբին թելերուն, ուրկէ ծագում ու ծնունդ կառնէ բանաստեղծութիւնը ու կը սլանայ հոլաթեւ:

Ո՛հ, բնութեան զարթնումը չի նմանիր ու եւ է զարթնումի, վասն զի մանկիկը երբ զարթնու՝ կուլայ, չափաւասը երբ զարթնու՝ կը յօրանջէ, իսկ Բաղաամու հեծածը երբ զարթնու, իր բազմաձայն երգեցողութեամբ եեմիլիսը կը կործանէ, իսկ բնութեան զարթնումը՝ կեանք մը կարծէ, քանի որ կեանք կը պարգեւէ, ո՛հ, բնութեան զարթնումը...

Կը շարունակեմ պտոյտս, ուշախուով մը տաղբազ ու գլխակախ տիկանման ուռեցներով շոգիյազաղջ ու մաքուր օդով, ու ահա ձայն մը՝ որ երբէք չէր նմանէր սոխակին, առուակին, գառնուկին, իշուն, շանը, աքլորին եւլն. եւլն. ձայներուն, զիս կսթափեցնէ իմ մտածկոտ վիճակէս, վեր կառնեմ գլուխս ու կը գտնեմ դէմս տիկին դրացուհիս իր Աստուածապարգեւ աղջկան հետ, և որուն ի տես՝ կը մոռնամ բնութեան գեղեցկութիւնը, ու կը ցնդի միտքս, կը բաբախէ սիրտս, կը թռթռայ հոգիս, կը կիթոտին ծունգերս, կը դողդղայ մարմինս, կը թոթովի լեզուս, կը գալարին աղիքներս, կը գունատ

տի դէմքս, կը բթանայ ուղեղս, կը չլսորի հայեացքս, կը խաւարին աչքերս, և դեռ չատ մը վգայարանական այլափոխութեանց կ'ենթարկուիմ, որոնք գրիչով կարելի չէ բացատրել, ու կըսէ ինձ գրացունհիս:

— Պարո՛ն, ի՞նչ գործ ունիք հոս այսպէս առտուն կանուխ:

Կը պատասխանեմ:

— Որովհետեւ տիկին, քանի որ աշխարհի վայելքներուն մէջ ձրի վայելքը բնութիւնն է, ուստի զայն վայելելու եկած եմ, սակայն անշուշտ կը ներէք ինձ որ ես ալ հարցնեմ ձեզ թէ՛ դուք ի՞նչ բանի համար հոս կը գտնուիք:

— Արաքսիս քիչ մը ջղային ըլլալուն թիչկը պտոյտ պատուիրեց, հետեւաբար բժշկին պատուէրը կը գործադրենք. և Արաքսին՝ որուն ջղային հիւանդութիւնը վարկեանապէս փոխանձուած էր ինձ, կարմրուկ այտերով, վաւռուտ աչքերով, հրեղէն սիւնի մը նման կը կենար դէմս լուռ ու մունջ, ունկնդրելով մեր խօսակցութեան:

Ո՛հ, հաւատացէ՛ք կրակ մ'էր ան, կրակ մը՝ ձիպալին կամ դժոխքին կրակէն ալ աւելի անեղ և անարկու, այսուհանդերձ ես միշտ պատրաստ կը գտնուէի ինքզինքս ամէնայն սիրով հրաժարելով արքայութեան ամէն երջանկութիւններէն, նետուիլ այդ կրակին ծոցը ու բոցակիզեալ ճարճատիւ. ու կը շարունակենք խօսակցութիւննիս՝ միասին քայլերով, և հաւատացէ՛ք թէ այն աստիճան գոհ էի այս պտոյտէն՝ որ կարող կզգայի ինքզինքս այսպէս հետիոտն աշխարհի շրջանը կատարել, սակայն մայրիկը տեսնելով որ Արաքսին յոգնեցաւ, կառաջարկէ ինձ մօտակայ դաշտային սրճարանը քիչ մը նստիլ ու յողնութիւն առնել, մէյմէկ սուրճ խմելով, առաջարկ մը՝ որ աշխարհիս ամէնէն անքաղաքավար մարդը հաճոյքով ու խնդութեամբ պիտի ընդունի ու երբէք չը պիտի յանդգնի մերժել, սակայն ես ի մարդոց մեղաւորաց ամէնէն անքաղաքավարագոյնը ու ամէնէն անկենցաղագիտագոյնը, մտածելով թէ վրաս գտնուած տասը գրպաններուն մէջ միայն քսան փարայ կը գտնուի, և որն որ չը կորսնցնելու համար ամէն վայրկեանը մէկ մը երկու մատներս բաձկոնակիս գրպանը կը խո-

թէի ու կը չոչափէի, ու անոր պատկառելի ներկայութեանը վստահ՝ ազատ շունջ կառնէի, քանի առաջին շոգենաւին իբր նստելու միայն տրամադրելի էր, և քանի որ այս դժբաժն խոյն խոյն անբաւական ու կարճ կուգար սուրճերուն գինը վճարելու, հետեւաբար կամքէս անկախ անքաղաքավարութեամբ ու կոշտութեամբ ստիպուեցայ մերժել առաջարկը, շոգենաւին փախուստը ու գործիս ստիպողականութիւնը մէջ բերելով՝ բաժնուեցայ, թողնով օրիորդին այտերուն վրայ մերժուէն ու պզտիկ մնալէն յառաջ եկած վարդի գոյն մը, անիծելով նվովելով ու նըզովելով անկուտիութիւնը, որ զիս վիճակահից ըրաւ Նախահօր, զրկելով մեղաւորս դժբախտավայել երջանկութենէ մը:

Բառոյական. (Ելածին չափ). — Երբ գերպաններդ չեն լիք, ու կը կոչուիոն ճեպի-ճեպի բարեւ անգամ մի տար կանանց առհասարակ, որ վերջը չըլլաս դու խաղք խայտառակ, եթէ նոյն իսկ ըլլայ Նէ քոյրդ, չատի կը նստի քեզ մէկ համբոյրդ:

ՌՈՄԱՆՈՍ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԱՅՈ՛, ՄԻՇՏ ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ՆՈՐ ՄԱՐԴԻԿ ՆՈՐ ՆԻԻԹԵՐ

Յ. ԱԼՓԻԱՐ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

ՏԻՇԼԷԿ

ՄԻՕԶՕԹԻՍ

ԴԻՄԱԿ

Ս. ԽԱԶՈՒՆԻ

Ե Լ

ՏԱՆՍԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

ԽՆԴՈՒԹՈՎ ԼԵՑՈՒՆ

ԼԻԼԱԷ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱԼԱԹԻԱ. — Կեղծ ու պատիր կարգ մը քալիթ հաւատացեալ տիկիներէն շերմապէս կը խնդրուի որպէս զի իրենց առտնին և ընտանեկան խօսակցութիւնները գէթ Ս. Փրկչի պահարանին մէջ չի կրկնեն, ուրիշներու քար գայթակղութեան չըլլալու համար:

ՍԿԻՒՏԱՐ. — Տեղական մատի վրայ համրուող երեկոյթները վերջ գտնելուն, հոս կարգ մը օրիորդներ պոխճանին կապելով Բերա և Գատը-գիւղ երթալու միաք ունին: (Հոնտեղիներն ալ երբ լմնալու ըլլայ Քոխ-թալը բաց է տարին տասերկու ամիս. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Սաքայեան կտակին խնդիրը ժամը 65 մղոն արագութեամբ ընթանալու վրայ է: Զրոյցի մը նայելով՝ այս անլուծելի խնդիրին վերջ մը տալու համար մասնաւոր պատուիրակութիւն մը հանգուցելոյն գերեզմանը դիմելով՝ պիտի պոռան եղեր ականջին «փարաներդ ինտո՞ր բաժնենք...»: (Կամաց պոռացէ՛ք միւս քնացողները չարթնան. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Երեսուն և վեց սօն պահարները ողջունող փալիւաչուք օրիորդ մը մտադիր է ամուսնանալ այն երիտասարդին հետ՝ որ հաճի երգչու և ստորագրութիւն տալ Գատաստանականին առջեւ, թէ ամուսնութենէն վերջ է՞ փիսիկ մը անգամ գիրկը չպիտի առնէ... հինգ հարիւր ալ ոսկի ճապա: (Խնձի կառնէ՛ աճապա. Ծ. Լ.):

ԲԵՐԱ. — Բարեկենդանի առթիւ Պոսոյ արուարձաններէն հոս դիմող ընտանիքներու երեսէն, թիւնելի ընկերութիւնը 140, թըռամվայը 250 ոսկի աւելի հասոյթ ըրած են, հակադարձաբար Գուլէ-գաբուի սալայատակն ալ կէս միլիոն մաշած է:

ԱՏԱ-ԲԱՉԱՐ. — Հանրագիտակի նախորդ գործակալ հոշակաւորն Կարապետ Պուրմանան՝ մտադիր է ֆոնսեռ մը սարքել՝ թագերով, բաղերով և աքլօրներով, որուն հասոյթով կը յուսայ գոցել իր պարտքը, ի՞նչ կրնէ՛ք: (Կը խրատենք որ առաջ կէս թօփ ամերիկացի առնելով մէկ քանի անդրավարտիք չինէ, աւելորդն ալ պատանգ, իր պէտքը մէջը պլլելու համար. Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Շատ անգամ կը կարդանք լրագիրներու մէջ թէ՛ «այսինչ թիւը սպառած է» եւլն. նոյն բանը կրկնելու հարկին մէջ կը գտնուինք, մեր 22րդ թիւին համար, ուրկէ դեղի համար հատ մը չունինք, մեր Պատ. ընթերցողներէն անոնք, որոնք հաւաքածոյ ընելու սովորութիւնը չունին, կը խնդրենք որ անմիջապէս մեզ հասցնեն այդ թիւը, փոխարէն նոր թիւ առնելու համար:

ՍՐԱՄԻՏ ԶԲՈՍԱՆՔ

Բ.

Շնչաւոր մ'եմ շունց չունիմ,
Գլուխ ունիմ խել չունիմ,
Ոսքեր ունիմ քայլել չգիտեմ,
Բերան ունիմ խօսիլ չգիտեմ,
Աշխատելով ուրախ զուարթ,
Գեղեցիկ եմ արդ:

Ա. Ս. Զ.

Այս երկրորդ սրամիտ զբօսանքը մինչեւ յառաջիկայ հինգշաբթի ճիշտ գտնողներէն մին, վիճակաւ պիտի ստանայ Հանրագիտակի 1906ի փառակազմ հաւագածուն, որ ինքնին կէս Օսմ. ոսկիի արժէք մը ունի:

Եւ որպէս զի մէկ թերթ գնողը ուրիշներու ալ թելադրելով՝ մեզ աննպաստ առաւելութիւնը չընծայէ, կը փութանք յայտարարել թէ՛ այս կտրոնը միասին զրկողները միայն պիտի կրնան մասնակցել վիճակին:

Արտուստէր ԱՐՄԵՆ ԼՈՒՐԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ.

Պապը-Այի ճաշէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱԻԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱԾ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօիսպեան իսան
Սոյն վաճառատունը, որ տարին երեք
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ և գինեքու անմիջեղի
աժափութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վատահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց րէլոններու
և տղայոց շիք և դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին. 50—21



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԷ

Ճեպ պէյ իսանի-
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջիկասանէ, Հնդկասանէ, Ճապանէ եւ Ճա-
պոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըը-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտուեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՏԷ՛

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՆԱՆ, Պապը-Ալի հաստէսի Ասասուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ չկը փնտուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաքօսթով և կամ բօսթայի փութով 20 հապը
20 զրուշի հաշուով:

1 9 0 8

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐ ՈՒԹԻՒՆԸ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԳՐԲԻՆ ՀԱՄԱՐԸ ՅԱՏԿԱՊԵՍ ՓՈՐԱԳՐՈՒԱԾ
300 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Անմրցելիորէն բնօրինակոյն Դասագիրքի՝
Տարր. Դասընթացի երկսեռ աշակերտաց հա-
մար: Գին՝ 5 դրուս:

Կեդրոնացեղին է հեղինակին սեպական
ԳԱՐՈՒՆ ԳՐԱՏՈՒՆԸ, Կ. Պոլիս, Մեծ Նոր
խան, վերի յարկ, քիւ 55:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԷՍՃԵԱՆ

3 Պահպան-գաբու քիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կրը-
նաք գտնել այն ամէն չիք, տոկուն և
աժան առարկայները, որոնք Թօհա-
ֆիյէի մաս կը կազմեն: Անգամ մը այ-
ցելելը համեզում պիտի կրնայ գոյաց-
նել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կրը-
նաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը
այն բնառուած արթիքօլօին վրայ:

10—5

ԳԱՌՆԻԿ ՔԷՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իքւ 2

Նախ փորձառուները, յետոյ խա-
ռողները միայն գիտեն թէ ո՛րչափ
գժուար է, գտնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան, թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Բէշիշեան վաճառատունը
Թօհաֆիյէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանէլաներ, զուլպաներ, քաւիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բոլորեղեններ,
Ֆիլիֆօս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, զլիսու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձրարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն
դիմելով պիտի հաստատեն թէ՛ զինե-
րու աժանութեան, ճեսակի ազնուութեան և
ապրանաց տոկունութեան երեք առաւել-
չութիւնները ուրիշ ո՛ր եւ է տեղ կարելի
է գտնել: